

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
արեկա՛ն	7 "
վեցամսայ	7 "
Արսասահմանի համար սարկիսն	15 ֆր.
վեցամսայ	8 "
Ասկրիկայի համար	3 ֆր.
սարկիսն	3 ֆր.
վեցամսայ	1.50 ֆր.

Ծանուցումն տողը ու ուղիքն երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Իրեֆին ա էջի անգլալեռն համար 20 0/0 զեղը կը լայն:

Վարձայի համար ձեռք 10 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНЫЕ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Պատկա՛ն և զրամ զրկիչ խմբագրութեանն հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և՛ չե՛ն տուի՛ր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՔԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԿԵՐ ԿՃԱՐԷ

## Ա Յ Ա Բ Ա Ղ Դ Ը

Կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ՛ Սօֆիոյ քաղաքի 11. վիճակահանութեան, Բ. կարգի ամենամեծ շահեստը ֆր. 20 000 ոսկի շահած է թիւ 32661 տոմսակը, ծախուած զլիսաւոր զործակալութեանս ձեռքով. քաղաքիս մէջ. Այդ բողոք վայելեց հայ օրիորդ մը:

Ի՞նչպէ՛ս կ'ըլլայ զի զիստացուի թէ երբ կը ժպտի. ամէն պարագայի մէջ խելացիութիւն է բողոք փորձիլ՝ այն ալ զլիսաւոր գործակալութեանս հայթայթած տոմսերով, թէ ո՛վ չունի, լաւ է որ ձեռք տայ բողոքին:

### ՍԱՐԳԻՍ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ Սօֆիոյ քաղաքի վիճակահանութեան, երաշխաւորեալ Իշխանական կառավարութեան

## ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԸ

Արինայի զուրկութիւնը կրկին րուկաւ կովկասի մէջ. Հայկական գիւղերը նորէն սուրի և անբուժի մատուած են: Եւ այս անգամ, այլեւս անուրանալիօրէն ակնյայանի կերեւայ, թէ ո՛վ է մեր իսկական թշնամին, թուրքին, թաթարին վայրագ բնույթնեքը սրող, քայլերող, պաշտպանող անարգ ձեռքը:

Յարիզմի պաշտօնեաները, չի բաւականանալով անցեալ տարուան կեղծ ու պատիւ անկողմսկալի դերէն ու անբարոյ անարգութեամբ, այլեւս հայկական ջարդերը կազմակերպելով մոլորի մէջ, քանի որ իրականութիւնը ոչ ոքի աչքէն կը վրիպէր, սկսեալ բացէ ի բաց գործի ձեռնարկել: Իր հոգեվարքի օրերուն, իշխանութեան յախտեմապէս ձեռքէն ելլելը մտաւորաւ զգալով, վերջին ճիգերը կը թափէ իր անցեալի վայրագութեան փառքերուն մնացորդները դեռ վայելելու: Իր գազաքները, կովկասի մէջ, իրենք են որ սկզբակի կը կատարեն անբուժի գործը. թաթարներուն գործած անբարոյ ամբողջացնելով ու կատարելագործելով:

Որքան ժամանակ դեռ պիտի տեւէ այս սոսկալի կացութիւնը, ոչ ոք կրնայ գիտնալ այժմէն: Եւ սակայն, իրականութիւն է թէ փոխանցման ճգնաժամը չափա

զանցօրէն երկար տեւեց կովկասի համար և կրպտանայ պարբերական դառնալ, Թուրքիոյ ներքին քաղաքական վիճակին անպատասխան լքելով հասնելու պարագային:

Արդարեւ, Թուրքիոյ սղատագրութեան խնդիրը ամենափափուկ վայրկեաններ կապրի. օրէ օր կը սպասուի կամ ցարիզմի անպայման զիջողութիւններուն ճուճայի պահանջներուն, կամ վճռական բողոքով այդ երկու ուժերուն միջեւ, որուն հետեւանք երեւակային իսկ ստրատիկազգէ: Անիշխանութեան այդ սեւ օրերուն, կովկասը շատ ուժիւրներ պիտի տեսնէ զեռ. ցարիզմը մինչեւ իր անդարձ կորստեան գիւղերը նախճիւրներ պիտի կազմէ իր չորս դին և բողոքաւոր կոհեր պիտի յանձնէ գերեզմանին իր անկումէն առաջ:

Հայերս, ինչպէս միշտ, այս անգամ ալ ակնյայտօրէն վտանգին հետ գէ՛մ գի՛մաց կը գրտնուինք, առանց ելքի ճարմը ունենալու: Անչուշտ, ինչ որ ալ ըլլայ ցարիզմի բարբարոսութիւններուն շափը, ազգ մը չի ջնջուիր այդ հրէշային հալածանքներով: Կորուստը պիտի մեծ ըլլայ մեզի համար, բայց անվրիպելի Ռայց այնքան անելի կը նուազի այդ կորուստը, որքան, անձնապաշտպանութեան զգացումով զօրացած՝ իւրաքանչիւր հայ կատարէ իր պարտականութեան մեծագոյն բաժինը:

գրամատերը՝ գրամով, անձնուէր երիտասարդը իր հերոսութիւնով և կուռելո անխուսափելի յարկին մէջ գտնուողն ալ անվախօրէն կուռելով:

### ՇԱՅՄ

## Շ Ղ Թ Ա Ն

Ոտքերն ու ձեռքեր զարկած շղթային՝

Ձգել են խոնար մէջը մութ բանտին Անդուսալ հայդուկին լեռներէ ազատ, Ձի աշխարհ իրեն նեղ էր գայիս շատ, Եւ նա իրփրուն, կատաղած, կիսաւեր, Անդաղար շարժէ, շարժէ շղթաներ:

Մոռայի բերն, վրդոված թափով, Լեռների քամին սուրայ ոտնալով, Ու թափ տայ բանտէն հրացանի պայթիւն:

Փողի հրաւէր, թրքերի հալիւն, Սիրտը խշխշայ ու գումէ դուրս գալ՝ — Յուսահատ շարժում է շղթան դարձեալ:

Սելագար, կատաղած, անիծէ զընդան,

Ծնողքը, Աստուծուն... և յանկարծ շղթան:

— Ազատ լեռների, կրսէ, դու զաւակ, Ինչո՞ւ անիծում ես ինձի հիմակ, Բռնաւորն կոփեց զիս այն երկաթից Մահաբոյր՝ հայդուկից սրտակից —

Շարժի՛ր զիս շարժի՛ր շարժի՛ր մահաբեր

Բանտում կապկպած, բայց զիս մ'անիծէր:

Շօինդս արիւնտ սրտիդ անէ՛մքն է, Լիրբ բռնաւորին գլխին կը թափէ:

### ԱՆՈՒՇԱԻԱՆ

## ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Իտալական նախարարութեան անկման անթիւ, բազմաթիւ թերթեր կարեւոր ուսումնասիրութիւններ հրատարակեցին Իտալիոյ քաղաքական ներքին կացութեան վրայ ի ստորև կը թարգմանենք մին առանց մէջ, հրատարակուած Գ. Էօրօրէնին մէջ, ուրկէ կերեւայ որ Ճանդէի հայրենիքը աննախանձելի դրութեան մը մատնուած է, շնորհիւ ապականուած կանաւարողներու և ազգաբնու երես-

փոխաններու կաշառակերութեան Ահաւասիկ այդ յօդուածը, գրեթէ իր ամբողջութեամբ:

«Ճիօրթիթի, Իտալիոյ քաղաքական ապականայումին տխուր հերոսը եւ բոլոր ինկած մարդոց պաշտպանը, ամեն շիւ ձեռնարկներու կուսակիցը, Ճիօրթիթի, որ երեք անգամ ամօթաւ լիօրէն իշխանութեան ինկաւ, կրկին հոն կը բայձրանայ Իտալիոյ ազատարար իր դերին մէջ:

«Առաջին անգամ, Ճիօրթիթի կծիկը զրաւ, երբ Պանք Թոմէնի գայլակալ զալից սնանկութեան յանցապարտները արգարութեան յանձնել արգելելու համար իր կատարած ջանքերը տարածայնուեցան. զիջեանց փախաւ և Պերլին ապաստանեցաւ: Բանի մը տարի ետքը, ազգին մտացունկուտութեան օգտուելով, դարձեալ իշխանութեան զուրկ անցաւ Մանարալի լի հետ ամենալայն ազատութեան ծրագրով մը Իտալիան, որ չափազանց երկար ատեն քաղաքական ճնշման տակ մնացած էր, այս ծրագիրը նկատեց իբր կարելի եղածին չափ լաւագոյնը Բայց շուտով յայտնի եղաւ որ այդ մարդը ճարպիկութիւնն ունեցած էր շնորհելու այն բանը, ինչ որ արդէն պիտի չի կրնար արգիւլել, որովհետեւ ամէն կողմ յեղափոխութիւնը կորոտար, եւ ազատութիւնը տրուելէ ետք (ինչ որ միայն հրահրուի գաւառներուն մէջ յարգուեցաւ), անիկա այդ բարենորոգումներէն ոչ մէկուն ուժ չի տուաւ: Երբ նկատեց թէ գործը գէշ կերթայ, իր պահպանած կարգ մը մութ յարաբերութեանց պատճառաւ, չի կրնալով անհրաժեշտ եղող բարենորոգումները տալ, որոնք արգելք պիտի հանդիսանային կարգ մը մարդոց՝ ազգին շահագործումը շարունակելու, երկրորդ անգամ ըլլալով փախաւ, քիչ ատեն ետքը Մանարալի լի յաջորդելու յոյսով, և խորհրդարանին առջեւ առանց պատասխանատու մնալու:

«Արդարեւ, քիչ վերջը, նախարարապետ եղաւ, բայց այս անգամ ալ իր կառավարութիւնը անկարող եղաւ Իտալիան տառապեցնող շարեաց դարման մը գտնել, և ասոր պատճառը այն էր որ, իր բոլոր բարեկամներն ալ կապրէին հանրային պաշտօններու միջոցաւ ազգը շահագործելու բարդ և սքանչելապէս կազմուած ոխտէմով, և հանրային ծախուց վերահսկողութեամբ զբաղող մարմինները չէին արգիւլել այս ապօրէն մտաւորները, որովհետեւ բոլոր վերին պաշտօնեաները գողերու այս վրձնակին անդամակիցներ են:

«Ուստի, ձիօրթիթի, երբ տեսաւ որ բարենորոգմանց խնդիրը բացարձակօրէն մէջտեղ կը դրուի, երբ որ պատին սեղմուեցաւ և հարկ եղաւ որ զեր կամ դէմ դիրք մը բռնէ իր բարեկամներուն հանդէպ, երկաթուղիներու գնումին, ծովային գաշնագրութեանց, զինուորական ծախուց յաւելման, եւ ուրիշ բազմաթիւ խընդիրներու մէջ, վատարար փախուստ տուաւ երրորդ անգամ ըլլալով, իր առողջական քայքայեալ վիճակը պատրուակ բռնելով:

Բայց իշխանութիւնը վերջնականապէս չէր ուզեր ձեռքէն բաց թողուլ: Այնպէս մը ըրաւ որ կառավարութիւնը իր բարեկամ Յօրթիթի ձեռքն անցուց, որպէսզի ինք յաջողի իր զօտարին ձեռնարկները ի գրուելու հանել, այնպիսի խորամանկութիւններով որ, եթէ արդէնքը նը պատահուր ըլլար, արժանիքի իրեն, ձիօրթիթի գար, իսկ երբ աննպաստ ըլլար, ամբողջ պատասխանատուութիւնը կը ծանրանար Յօրթիթի վրայ: Բայց ձիօրթիթի յատակագիծը օղբ ցնդեցաւ Յօրթիթի, ազգը շահագործողներու խումբին մէջ ամենէն շատ ամբաստանուածներէն մին, ու նուազ ճարպիկ քան ձիօրթիթի, զիչ ատենուան մէջ, երկու անգամ տապալեցաւ:

«Յայնժամ սիակ լուծում մը անհրաժեշտ կը դառնար. կառավարութեան գլուխ կանչել այն մարդը, որ տաք տարիէ ի վեր մեծամասնութեան ընդդիմութեան կը բաղխէր, որովհետեւ պարկեշտ ճանչցուած էր եւ կատաղի թշնամի երկրին բարիքին հակառակ և փօրթիթիկոսներու սրայն շահաւէտ եղող ամէն գործունէութեան. այս մարդը Սօնիսօն էր: ձիօրթիթի ինքն իսկ հարկադրուեցաւ խրատել թագաւորը որ կառավարութիւնը անոր յանձնէ, և Սօնիսօն նախարարապետ եղաւ: Իր նախարարութիւնը կազմեց իրենց յանձնուած գործին մէջ խիստ կարող ու ձեռնհաս անձերու, եւ ամենամեծ կորովով կարենալ իրագործելու համար մաքրագործուած զոր կուզէր ի դուրս հանել, իր մօտ կանչեց ծայրագոյն ձախակողմաններէն չորս լաւագոյն երեսփոխաններ: Սօնիսօնի նախարարութիւնը իսկոյն գործի սկսաւ. խորհրդարանին ներկայացուց մեծ քանակութեամբ օրինագիծեր և գեռ շատ մըն ալ պատրաստելու վրայ էր ամենէն ստիպողական հարցերու ժաւհին, որոնց բոլորն ալ միակ նպատակ մը ունէին, վերջ տալ պետութիւնը և ազգը շահագործելու բոլոր եղանակներուն, ժողովրդին պայմանները բարելաւել, այնպէս որ ազգը ըլլայ երկրին բաղբը վճողը և ոչ թէ փոքրաթիւ անձերու խումբ մը:

(Շարունակելի)

ՆՍՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Առ Պատ. խմբագրութիւն «Շարժում» ազգ. թերթին Ի վառնա

Տէր Խմբագիր,

Գրեթէ 7—8 ամիսներէ ի վեր պատ. թերթիդ մէջ մերթ ընդ մերթ «Բէօսթէնճէցի» ստորագրութեամբ կարգ մը յօդուածներ տեսնուածին նման, այս անգամ ալ 24 մայիս և 815 թուոյն մէջ միեւնոյն ստորագրութեամբ և հիմնովին հակառակ ճշմարտութեան յօդուած մը տեսնուած ըլլալուն, ստիպուեցաւ խորհուրդս արգարութեան պահանջմամբ ներկայս յղել ի հրատարակութիւն:

Պրն. յօդուածագիրը տեղւոյս քննյ. Ա.ժ. տէր Արիստակէս հայր մէջլեանի մասին բոլորովին անտեղի զրպարտութիւններ յերկրելով ի Բաղարճը, ի Սօֆիա և ի Ռուսնու պաշտօնավարութիւնները իբր ազգափնօս կը պատկերացնէ. փաստ մը որ բոլորովին անհիմն է, քանի որ հաստատապէս ստորագած եմք Արժ. տէր հօր մասին սոյն քաղաքներէ ի գոհունակութիւն պաշտօնական գրութիւններն ու բարոյական վարձատրութեան համար եղած գիմումներն առ որ անկէ. որք ժամանակին թերթերու միջոցաւ ալ պաշտօնապէս հրատարակուած են: Պր. յօդուածագիրը կը յամարձակի յաւելուլ թէ «տեղւոյս ազգայինները թուելով յիշեալ քահանայի թերութիւնները հանրագրութիւն մը պատրաստած են, իսկ ստորագրուելու ժամանակ (որպէս թէ) ազգ. վարձարանիս յարգոյ ուսուցիչները կասեցուցած են...»

Նախ որ՝ այդ տեսակ հանրագրութիւն մը երբեք տեղի չէ ունեցած և արդէն տեղի տրուելու ընաւ պատճառներ չկան և եթէ ուրիշ գանգատներ ըլլան իսկ տեղւոյս ժողովուրդը զարժանն կրնայ տնօրինել նոյն իսկ խորհրդոյս միջոցաւ. և եթէ նոյն իսկ այդ տեսակ հանրագրութիւն

մը մէջ տեղ ելած ըլլար և նոյն իսկ մեր դաստառներն ալ զայն կասեցնելու ազնուութիւնը ունեցած ըլլային (ինչ որ տարակուսելի է) այդ պարագային իսկ այդ գործը մեր դաստառներու կարողութենէն շատ ու շատ վեր է. հետեւաբար ինքնին կը հաստատուի թէ՛ ո՞ր աստիճանի տխուր յայտարարութիւն մը և վիթխարի սուտ մըն է այդ:

Տէր Խմբագիր, Արժ. Տէր Արիստակէս հայրը քաղաքս պաշտօնավարութեան սկսած վարչկեանէն մինչեւ այսօր թէ՛ պաշտօնապէս և թէ՛ անպաշտօն կերպիւ բնաւ մէկը ո՛ր է գանգուս մը ունեցած չէ՛ իր զէմ. ինքը իր պաշտօնին գիտակից՝ իր կարողութեան սահմանին մէջ ջանացած է միշտ օգտակար ըլլալ Ազգին ու ժողովրդին և նոյն իսկ իր պաշտօնէն ու պարտօսկանութենէն դուրս ալ Ազգային օգտակար ձեռնարկներու միշտ ձեռնուէ, և ահա ատնց փոխարէնն էր որ սակից քիչ օրեր առաջ տեղւոյս Խաղ. խորհրդոյ և երեւելի ազգայնոց ստորագրութեամբ խնդրագիր մը մատուցուեցաւ հոգեւոր բարձր իշխանութեան ի բարոյական վարձատրութիւն իւր ալ ժանեացը:

Քօնսթանդիս բաւական ժամանակներէ ի վեր պրն. յօդուածագիրին նման խել մը անձանց շահատակութիւններէն ալլես սթափած ու զգուած՝ լուռ ու կիցիցին բարեկարգ վիճակի մէջ պահելու հոգ կը տանինք և երբեք չենք ուզեր կարեւորութիւն տալ զանազան ըսի ըսուներու, վստահ ըլլալով որ այդ պիտիներն են որ բռնեց անձնական շահը կը փնտռեն միայն հանրութեան զիտսին մէջ:

Ուրեմն կը յորդորեմք այդ յարգոյ յօդուածագիրը զգուշանալ ազգային խնդիրներու մէջ որով ցանկելու յատկութենէն, քանի որ այլ եւս ժողովուրդը վստահ է թէ՛ այս տեսակ մարդիկն են միշտ վրաս հատուցած մեզ. ըլլա՛յ տեղական, ըլլա՛յ ընդհանուր:

Տէր Խմբագիր, հաճեցէ՞ք ներկայս նոյնութեամբ հիւրնկալել Ձեր պատ. թերթի մտակայ թիւերէն միոյն մէջ և այն ալ ոչ թէ միայն Քօնսթանդուսցուցս համար, այլ ընդհանուր հայ գաղութներու ի լուր, որպէսզի ծանօթանալ հայ ազգը թէ՛ մեր մէջ իրենց անձնական շահուն համար ո՞ր աստիճանի խառնակութիւններ յառաջ բերելու պատրաստ մարդիկ կան դեռ:

Ընդունեցէ՞ք ուրեմն խորհրդոյս յարգանքն  
Ի զիմաց Խաղ. խորհրդոյ  
Անեւաղ պիր Ատենապետ  
Կ Մարգարեան Նազարէթ Գ. Թորոսեան  
30 մայիս 1906  
Իննսթանա

ՊՈՒՐԿՕ-ՐՐԳԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆԻԿԻ  
ԳՍԱՆԵԻՉԻՆԳՍԵԱՆԸ  
1880-1905  
(Եւրոպայի հայոց նորագոյն պատմութիւնից)

Ա.  
Թուրք-քրդական նոր դէպքերը. — Մի քառորդ դար առաջ. — Գործեր եւ գործիչներ — ներքին պատերազմ, Ռիսիւան Հայրիկ կամարական — Քսրթիւն և Վայոց ձոր. — վառայ Այսաւայի վալի. — Շէմզի. — նաև և շէյխ Սիբաղուլա: — Մար-Շիման. — Սլման Ձիլինգերեան. — Աղև որութիւն զէպի Օսմանեան Գիւրգաստան:

Ատրպատականի թուրք պարսկական սահմանադիր վրայ այս օրերս տեղի ունեցող դէպքերը սկսել են ուշադրաւ լինել եւ քաղաքական հանգամանք ստանալ: Թուրք-քրդական այդ խրատմանը ներկայ ազէտալի օրերում մեզ հայերիս համար էլ սեծ կարեւորութիւն ունենալով՝ արժէ պատմական մի հայեացքի տեսարկայ դայձնել այդ կրկին անգամ բունկուած լուրջ խնդիրը:

Մտաւորապէս 25 տարիներ անցել են այն թուականից, երբ 1877/78 թ, ռուս-թրքական վերջին պատերազմի հերոսներից Շէյխ Սիբաղուլա առաջին անգամ ըստ հրահանգի Սուլթան Համիդի տասնեակ հազարներով

ՀԵՆՐԻ ՏՇ ՔԼԱՅՍ  
— — — — —  
Ը Ն Կ Ե Յ Ի Կ Ը  
(Շար. Անի. քիւնկ)  
Փիաչի չէր հաւատար ականջներուն, կարծես այս անլուր յանդգնութենէն զինաթափ եղած. նետեց ձեռքի մարակը գաւազան ու զըլխարկն առաւ, կնոջը նշան ըրաւ որ իրեն հետեւի, իր ձեռունի խորհրդատուին, սօքթէոր վալէնիօ, տունը գնաց աղախինը դուռը բացաւ եւ փիաչի հազիւ ինքզինքը բարե-

կամին սենեակէն ներս նետած՝ զգայազուրկ ինկաւ, առանց խօսք մը կարենալ արտասանելու: Տօքթէօռը, որ իր տունը հիւրընկալեց Փիաչին եւ էլ վերջը յաջորդ օրն իսկ ձեռնարկեց այդ զօխային յարագործը ձեռքակալել տալու ձեւակերպութեանց: Բայց, բոլոր առաւելութիւնները այդ անպիտանին կողմն էին: Ու սինչդեռ Փիաչի իր անզօր լծակները կը լարէր Նիքօլօն արտաքսելու շամար իր իսկ անոր վրայ դարձուցած ստացուածներէն, այս վերջինը, իր բարեկամ Քառմի վանականներուն դացած էր, խնդրելով որ զինքը պաշտպանեն այդ ձեռունի յիմարին զէմ որ կուզէր կողպտել զինքը:

Վերջապէս. անարդարութիւնը աղից օրովնետեւ անարք արարածը հաւանեցաւ ամուսնանալ Գրգավիկոսային հետ. որ կուզէր իր եպիսկոպոսէն օձիկը ազատել, Այս եկեղեցականին միջամտութեան շնորհիւ, կառավարութիւնը հրամանագիր մը տուաւ, որով Նիքօլօ Փիաչիի ստացուածոց սեփականատիրութեան մէջ կը հաստատուէր եւ կազմարարութեւր Փիաչիի երբեք զայն չանհանգստացնէր:  
Արդ, ճիշդ օր մը առաջ ձեռունին հողին յանձնեց էր էլ վերջը, որ մեռած էր այն ճակատագրական գիշերը ստացած բուռն ջերմի մը հետեւանքով: Այսպէս, կրկնակ յուսահա-

տութեամբ շարչարեւելով, Փիաչի հրամանագիրը գրպանը, իր տունը գնաց: Կատաղութիւնը զինքը զօրացուցած էր: Նիքօլօն, իրնէ արդէն ազատուէ, գետին տապալեց եւ գանկը շախչալից պատի մը գարնելով: Տան մարդիկը գործը վերջանալէ ետքը միայն նշարեցին Փիաչիի ներկայութիւնը, եւ վրայ հասան այն սիջոցին երբ Նիքօլօն զուլիւր իր երկու ձուկերուն մէջ առած, հրամանագիրը անոր կողորդը կը թխմէր: Ասկա ընելէ ետքը, ոտքի ելաւ, զէնքերը վար դրաւ, բանտ տարուեցաւ. հարցաքննուեցաւ եւ դատապարտուեցաւ կախաղանի, Եկեղեցական պետութեանց մէջ

սիննի քրդերից բաղկացած մի ստուար բաշի - բողոք բանակի գլուխն անցած Ուրմիոյ կողմից սահմանը խուժեց եւ ուղղակի առաջ արշաւելով պաշարեց այդ հինաուրաց քաղաքը :

Պիտի այստեղ յիշել որ այդ ժամանակ Գոլտում պատրիարքական աթոռի վրայ բազմած էր այնքան արժանաւորապէս ներսէս վարժապետներ, իսկ նրա ներկայացուցիչն էր վասպուրական աշխարհում Սրբիման Հայրիկը : Եւրոպական երկու մեծ պետութիւններին՝ Ռուսիան եւ Անգլիան զեռ նոր նշանակել էին իրանց լաւագոյն ներկայացուցիչներին, որպէս միանշուն հիւպատոսներ, հսկելու Յէ-րդ տէլ տալի եւ շարաքաստիկ յօդուածի իրազորմանը մասին : Գրանք հին հայագի տոհմային աշնուական զննարկեց Կոստանդին Կասարականը եւ անգլիացի Գէորգըն էմիլիոս Գլէյթըն, երկուսն էլ բառի բուն նշանակութեամբը ընտիր, ազնիւ եւ իրանց պաշտօնի բարձրութեան վրայ կանգնած մարդիկ, որոնք չէին զազարում գիշեր ցորեկ աշխատել հայ ժողովուրդի տխուր եւ տառապալի վիճակի բարեօրոյնում մասին : Որոհեաւ մեծ սովի տարին էր այն : Չը մտանանք այստեղ յիշել նաեւ անցողակի կերպով որ վասպուրական ընդհանուր նահանգապետ էր Շքոտրալի Հասան Բաշա Ալթանեային, որը զարթ սկզբում օսմանեան պետութեան Ալթանեայում տիրապետութեանը դէմ ապստամբելով յետոյ պարտութեան մատնուած իր սմրոցը իր ամրոցը բնակչիներով օգը հանող հաշակաոր Դէրէ-դէլէնի Սի բաշայի ցեղից լինելով զէպի օսմ. սուլթաններին գահը խոր ատելութեամբ տողորուած մի մարդ էր, եւ իր արքայ ուղարկուած էր վան : Դա բաց է բաց մի հայասէր պաշտօնեայ լինելով ամենայնիւ աշակցում էր հիւպատոսների մարզաւեր ջանքերին՝ ժողովրդեան թշուառ վիճակը բաւ կարելոյն ամօքելու, եւ կարելի է ասել որ նրա օրով հինաուրաց հարստահարութիւնները ու զրկանքները, զոնէ վասպուրական երկրում, բաւականաչափ զսպուած էին, իսկ նրանից յետոյ վանը այլեւս մի բարեխիղճ թուրք պաշտօնեայի երեսը չտեսաւ :

Այստեղ Շէմզդինանում (թիւրքոպարսկային սահմանագլխի վրայ), որ վանայ ընդարձակ կուսակալութեան հետու որ մի խուլ ու խաւար անկիւնն էր կազմում այն ատեններ, հաստատած էր Շէյխ Իբրահիմը իր բնակութիւնը՝ վայելելով ամբողջ Հաքիա-րի գաւառի քուրդ ազգաբնակչութեան

օրէնք մը կար. ոչ մէկ ոճրագործ չէր կրնար մահուան պատիժ ընդունիլ առանց արձակում ստանալու : Արդ, Փիաշի, իրեն եղած առեւի անարդարութեանն ետքը, յամտօրէն մերժեց արձակում ստանալ : Ապարդիւն փորձերէ ետքը կրօնքին տրամադրած բոլոր միջոցներով զայն համոզելու եւ զգտացնելու համար իրեն իր ընկացքին յանցապարտութիւնը, յուսացին որ զղջումի ոգին կարելի պիտի ըլլար զարթուցանել անոր մէջ երբ մահը մօտ զգար իրեն :

Ուստի զայն կախողան առաջնորդեցին : Հոն քանակայ մը կար, որ անոր նկարագրեց վերջին կատաստանի փողերուն հնչումով, զժոխքին այն

յարգանքն ու համակրութիւնը Մա նաւանդ մեծ պատերազմից յետոյ (1877-78) նրա գիւղը մի օջաղ, ազգային մի սրբավայր էր դարձել բոլոր քրդերի համար, որոնք հետոյից եւ մօտից խմբովին դիմում էին նրան իրանց վէճերը կարգադրելու, հաշտեցնելու նրանց տեղային կոիւնտերում եւայլն : Շէյխը նոր էր վերադարձել իր գէպի Մէքէէ աւրած ուխտագնացութիւնից եւ անցնելով Կ Գոլտից արժանացել էր նա Սուլթան Համիդի ընդունելութեանը ու բնձաներին, աւելցնենք նաեւ հրահանգներին, քանզի համարաւանական տէնդէնցիան արդէն սկսել էր այն ատեններ գործնալ եւ տիրապետել Համիդի սրտում, իբր միակ միջոց օսմանեան խարխուլ գահը ամբապնդելու՝ հանգէլ պետական անախորժ միջամտութեանց եւ մանաւանդ ան վերջ ու անվարձան ընթացիկ աննիծեալ ծրարներին :

(Շարունակելի)

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

«Տայլէ Րըվիւ» հանդէսին վերջին պրակին մէջ յօդուած մը կայ, որ մանրամասնօրէն կը քննուին Անգլո-Գերմանական յարաբերութիւններն :

Յօդուածագիրը ամենէն առաջ իշխան Պրիւզը արգարացնել կը ճգնի, եւ կը ցուցադրէ թէ՛ նա չէ Անգլո-Գերմանական յարաբերութիւններու լարուելուն պատճառը, Հեղինակը կըսէ թէ՛ Պրիւզը օրերէն սկսած Լօնտօնի եւ Պրիւզի միջեւ յարաբերութիւնները սրտագին չեն եղած, իսկ երբեմնի եւ այսօրուան լարուած յարաբերութիւններու պատճառը, Անգլիոյ տիրապետական քաղաքականութեան արդիւնքն է :

Ասկէ ետքը հեղինակը խօսելով վերջին ժամանակներ ցուցողուած բարեկամական ձգտումներու, բաժակաճարներու, սարքուած խնձոյթներու եւ այլն, ասոնց բնաւ նշանակութիւն չի տար :

Գերմանիա, Անգլիայէն վախճալու շատ արդարացի պատճառներ ունի. անգլիական մամուլին անվտանգութիւնը, որ Գերմանիոյ մէջ մի քայլին կը հետեւի. Անգլիոյ թափած ճիգը, որով կը ճգնի Գերմանիան պարսից ծովածոցին մէջ շրջափակելու այս ամենը կարելի չէ որ տեւողական ընկերակցութիւն մը յառաջ բերէ :

Անշուշտ, Անգլիան՝ գերմանական բարեկամութիւնը չը մերժէր, պայմանով մը սակայն, թէ Գերմանիան միշտ Անգլիական շահերուն իրականանա-

լուն գործակցի, Գերմանական քաղաքականութիւնը կը հակառակի անգլիականին, անմիջապէս խոչնդոտներ կը յարուցուն : Անգլիան կուզէ որ բոլոր միացած ազգերու շահերը իր շահերու զոհը ըլլան, իսկ այս պայմանի տակ համաձայնութեան մը, քարեկամութիւնն անուշի վայել չէ կրնէ յօդուածագիրը :

Այսու, հեղինակը կը յայտարարէ թէ, նա կը փափաքի որ երկու կառավարութիւններու մէջ համաձայնութիւն մը գոյանայ, սակայն պայպանով մը, որ այս համաձայնութիւնը, իսկապէս ընդհանուր համաձայնութիւն մը ըլլայ երկու ազգերու միջեւ : Բոլոր վիճելի խնդիրները շոչափող, անգլիան, Գերմանիան չը նախանձի, եւ թոյլատրէ անոր այնպիսի ազատութիւն մը որ ծովային տեսակէտով ծաղկի ու բարգաւաճի :

Այս գրելէ ետքը, հեղինակը կը յարէ, Անգլիան այսպիսի համաձայնութիւն մը կը փափաքի, շատ տարակուսելի է, որովհետեւ անգլիական քաղաքականութիւնը, որիչ կառավարութեան մը աւելի կամ պակաս հակում ունենալէն կախումը չունի բնաւ, անգլիական սկզբունքն է՝ Բրիտանեան կայսրութեան շահերը թէ քաղաքականապէս եւ թէ տնտեսապէս կարելի եղածին չափ լաւ պաշտպանել :

Անգլիան ընդձովեայ հեռագրական թեւերու մէնատիրութեան եւ իլ ծովային ամենակարող ոյժի շնորհիւ իր գործառնութեանց տէրն է, եւ անա ինչու գերմանիան պարտի իր ծովային ուժը բազմապատկելու յաւելու հեղինակը, եւ եթէ երբէք կարելի ըլլայ Անգլիոյ հետ ընդհանուր համաձայնութիւն մը գոյացնել, հարկ է մասնակի ու յատուկ համաձայնութիւնով մը գոհանալ :

Ինչո՞ւ, օրինակի համար, Պաղտատի երկաթուղին համար բանակցութեան շրջակայ, որով կարելի ըլլայ Միջագետքի մէջ գերմանական երկաթուղական ձեռնարկը վարձատրել :

Վերջ ի վերջոյ, յօդուածագիրը, Անգլիոյ ասիական քաղաքականութիւնը կը վերաքննէ Անգլիացիները կը յարէ նա՝ պէտք է գերմանիան, անոնց ձարներոյ հետ կնքած կէպելեան դաշնակցութիւնը՝ երուպական ազդեցութեան եւ վաճառականութեան գերեզմանն է ծայրագոյն արեւելքի մէջ :

— 0 —

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՃԱՐԱՆ ԼՕՁԱՆ (Չուրցերիա) Ծ-րդ. տարեշրջան

Լօզանի հայ կրթարանը սահմանափակ թւով աշակերտներ կընդունի : Աշակերտներու ընդունելութիւնը տեղի կուենայ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը, այն ատեն կըսկսին դասախօսութիւնները :

Աշակերտներու ընդհանուր կըրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններուն մէջ, եւ ազգայինը, ինչպէս եւ թոյլ առարկաներու պատրաստութիւնը՝ կրթարանի մէջ : Ընտանեկան կեանք :

Կրթարանս ունի ֆրանսերէնի եւ գերմաներէնի համար եւրոպացի ներքին օգնականներ :

Ընդունելութեան տարիք՝ 8-էն 15, Հինգ աշակերտներ զեղջով կընդունուին :

Մանրամասնութիւններու համար կարելի է դիմել Տիար Յ. Ս. Փափագեանին, (Ատամնարոյժ) Վառնա, կամ Տնօրէնին հետեւեալ հասցեով՝ Էն սթիթիւ Արմէնիէն ԼՕՁԱՆ [Սուրս]

ՊԻՐՏԷՉ «ԿՐՕՏՏ»

Պատիւ ունինք ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ, ներկայ տմանային եղանակին համար, պարտէզիս մէջ հաստատած ենք նաեւ ճաշարան մը, ուր կատարեալ խնամքով ու մաքրութեամբ կը պատրաստուին ամէն կարգի կերակուրներ մասնաւորապէս վարձուած վարպետ արհեստաւորներու ձեռքով, Ծովային լողանքի կամ պտոյտի համար քաղաքային յոյսով պատ, հասարակութիւնը ամէն զիրուքիւն պիտի գտնէ մեր ճաշարանին մէջ, որ կրնայ ամենէն փափկաճաշակներն իսկ գոհացնել : Յարգոյ յաճախողներուն զուարճութեան համար այնպէս կարգադրած ենք որ, գարեջրատանս նուագախումբը, որուն ղեկավարն է հանրածանօթ Մախսթօր Հալի, պիտի նուագէ բացի երեկոյններէն, նաեւ կ'ուսուրուան ճաշի ատեն :

ՄԻՀ՝ԱՆ ՍԵՐՈՒԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ.


ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թրքական կառավարութիւնը, պարսկա-թրքական վիճելի հողաբաժնին վրայ, շարունակ զօրք

սաղալէլակոն բոլոր խումբերուն, աղաչելով որ զինքը տանին իրենց հետ, պնդեց որ իր միակ իղձն է դատուիլ եւ դատապարտուիլ եւ պնդեց թէ ո'ր քահանան իրեն մօտենար պիտի խեղճէր պարսկապէս, Նիքօրօն զժոխքին մէջ ալ աւելի վստահօրէն գտնելու համար : Պապին իմացուցին այս եզական պարագան, որ հրամայեց մահապաշտը գործադրել առանց արձակումի : Եւ ոչ մէկ քահանայ Փիաշի ընկերացաւ, որ կախուցաւ գաղտնի Փիաձա տէլ Փօփօրօ հրապարակին վրայ :

— Վ Ե Ր Զ —



օրէնք մը կար. ոչ մէկ ոճրագործ չէր կրնար մահուան պատիժ ընդունիլ առանց արձակում ստանալու : Արդ, Փիաշի, իրեն եղած առեւի անարդարութեանն ետքը, յամտօրէն մերժեց արձակում ստանալ : Ապարդիւն փորձերէ ետքը կրօնքին տրամադրած բոլոր միջոցներով զայն համոզելու եւ զգտացնելու համար իրեն իր ընկացքին յանցապարտութիւնը, յուսացին որ զղջումի ոգին կարելի պիտի ըլլար զարթուցանել անոր մէջ երբ մահը մօտ զգար իրեն :

Պապին իմացուցին այս եզական պարագան, որ հրամայեց մահապաշտը գործադրել առանց արձակումի : Եւ ոչ մէկ քահանայ Փիաշի ընկերացաւ, որ կախուցաւ գաղտնի Փիաձա տէլ Փօփօրօ հրապարակին վրայ :

— Կուզե՞ս փրկութեան բարեացք մասնակից ըլլալ, ըսին երկու քահանաները, Կուզե՞ս ընդունիլ ս. հաղորդութիւն :

— Ոչ, պատասխանեց, Փիաշի :

— Ինչո՞ւ ոչ :

— Որովհետեւ ես ընտրեալներու մէջ ըլլալ չեմ ուզեր : Ես կուզեմ զժոխք խորեւր երթալ, կուզեմ գտնել Նիքօրօն, որ ամէն պարագայի մէջ, երկինք չի կրնար ըլլալ եւ լու-

ծել վրէժս զոր անկատարօրէն միայն յագեցուցի այս աշխարհին մէջ :

Յետոյ, Փիաշի աթոռին վրայ բարձրացաւ, եւ հրաւիրեց զհինգ որ իր պաշտօնը կատարէ :

Վերջ ի վերջոյ ստիպուեցան յետաձգել կախաղանի գործադրութիւնը եւ բանտը փոխարեցին թշուառը զոր օրէնքը կը պաշտպանէր : Երեք օր յաջորդաբար միեւնոյն փորձերը, ըրին եւ միշտ չի կրցան յաջողիլ, նրբօրք օրը, երբ Փիաշի վար իջնել կըստիպուէր առանց կախուելու, կատաղի շարժումներով ձեռքերը վեր վերցուց, անիծեց մարդկային օրէնքները որ թոյլ չէին տար մարդոց գժօխք երթալու : Հրաւէր կարգաց

կը զրկէ, նա մանաւանդ շահի-  
ճանի մէջ գտնուած վէճն է և  
Բուզէփիդ. — Այս օրեր, վերո-  
յիշեալ երկու միջավայրը 4 ձիւ-  
ւոր գունդ և 6 ջոկատ հետեա-  
կազօրք ուղարկուած է, սակայն  
երբոր Մարտինէ կը հասնին, բո-  
լոր հետեակազօրը կ'ապստամբի:  
Այս ապստամբութիւնը զինուոր-  
ներու վրայ շատ վատ ազդեցու-  
թիւն կրնայ ներգործել, որով-  
հետեւ անոնք ամիսներէ ի վեր,  
կետնքի շատ վատ պայմաններու  
տակ վիճելի հողաբաժնին վրայ  
կը գտնուին: Զինուորական նա-  
խարարութիւնը աւելի անկէ կը  
վախնայ որ ամէն վայրկեան  
պարսկական զինուորները կրնան  
թշնամական գործառնութիւն  
ներն սկսիլ:

— Մաքսային տուրքի 30/0  
բարձրանալուն մասին, վեց մեծ  
պետութիւններու զեապաններուն  
տուած ծանուցագրին, Բարձրա-  
գոյն Դուռը տակաւին չէ պատաս-  
խաներ, կը կարծուի թէ, Բ.  
Դուռը պետութիւնները վերստին  
պիտի հրաւիրէ որպէսզի վերջ-  
նականապէս որոշեն երաշխաւո-  
րական հարցը: Անգլիան կուզէ  
որ, մաքսային տուրքի յաւելումը  
Իր միայն 7 տարուան համար ըլ-  
լայ:

— Թուրքիան զգաւտացած հի-  
մայի բըրբը ուժը կը թափէ  
Մակեդոնիոյ մէջ, յունական հրո-  
սակախմբերը ոչնչացնելու հա-  
մար:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Պէլուսոքի մօտ գտնուող ա-  
ւաններու մէջ անկարգութիւն-  
ներ տեղի ունեցեր և հրէաները  
ջարգեր են: Պէլուսոքի մէջ  
կարգը վերահաստատուած է, ա-  
մէն թաղի մէջ զեռեղուած պա-  
հակազօրը հրեայ բնակչութեան  
վստահութիւն կը ներշնչէ: Հա-  
րիւրի չափ գիտկներ, որոնցմէ  
մի քանին անճանաչելի դարձած  
է, հրեանդանօց փոխադրուել են:

— Թամպովի մէջ երկրազոր  
գործաւորները գործադուլ ըրած  
են, անոնք իրենց վարձատրու-  
թեանց վրայ զգալի յաւելում կը  
պահանջեն:

— Սարազովի մէջ գիւղացիա-  
կան անկարգութիւններ ծագած  
են, քանի մը մեծ ազարակներ  
հրդեհած են:

— Պէլուսոքի մէջ 200 վաճա-  
ռատունէ և բնակարանէ աւելի  
աւարի է տրուած, 6000 է աւելի  
հրէաներ մտակայ աւանները  
փախեր են: Ամսոյս 3ին անկար-  
գութիւնը տակաւին կը շարու-  
նակուի եղեր: Տեղւոյն և շրջա-  
կայ քաղաքներու պահակազօրը  
քաղաքը շրջապատեր և կրակել  
սկսեր է: Քանի մը տեղ հրդեհ  
ծագած է: Լուր կը շրջի թէ՛  
հրէաներու ջարդը, որպէս թէ՛

ասկէց օրեր առաջ սպաննուած  
Տէրգաչէվ տնուն ոստիկանապե-  
տին փոխարինումն է:

Հրէաները ոստիկանութիւնը  
և զինուորականութիւնը կամբաս-  
տանեն, և ջարդողներու կազմա-  
կերպիչը ու գործակիցը կը նը-  
կատեն:

— «Թամպով» լրագիրը Բեթերս  
պուրկէն կիմանայ: Ռուսիան՝  
Դերմանիոյ և Աւստրոյ հետ բա-  
նակցութեան մէջ է եղեր, որ-  
պէսզի ի դէպ Ռուսիոյ տրեւտեան  
նահանգներու մէջ ծագած ապր-  
տամբութեան, երեքը միասին  
գործակցին:

— Ռուսոյն կիմացնեն թէ՛  
անկարգութիւններ տեղի ունե-  
ցեր են, 20 հոգի մեռած և 100  
հոգի վիրաւոր կայ: Անկարգու-  
թիւնները կը շարունակուին:  
Ապստամբները կառախմբերու  
երթեւեկութիւնը արգիլած է:  
Ամսոյս 3 ին չորս գունդ հետեա-  
կազօր և ջոկատ մը գողաք զին-  
ուոր ուղարկուել է: Ներքին  
գործոց նախարարութիւնը յայ-  
տարարել է թէ՛ հոն վերստին  
զինուորական գրութիւն պիտի  
հրատարակուի:

— Բեթերսպուրկէն կիմացնեն  
թէ՛ յեղափոխական գործաւոր-  
ները միապետական գործաւոր-  
ները կանարգեն ու կը տանջեն:  
Ընկերավարական «կոլրոս» լրա-  
գիրը կը ծանուցանէ թէ, այս օ-  
րերս վերստին յեղափոխութիւն  
կը ծագի:

— Մոսքովի կիմացնեն թէ՛  
մարդիկ նոր ծագելիք անկար-  
գութիւններէ վախնալով իրենց  
գործերը կը յարգարեն և կը  
հեռանան երկրէ:

Ն Ա Ր Ժ Ո Ւ Ա

Ժողովի մը մէջ, ուր ելեմտից  
նախարար Ասդիր պիտի առնեա-  
խօսեր, կրնորը անոր դէմ շան-  
թալից ցոյց մը ըրեր են, որով  
հետեւ անիկայ կրնորու ընտրո-  
ղական իրաւունք աալու մասին  
հակառակ է: Ոստիկանութիւնը  
ստիպուէր է միջամտել, և Ասդիր  
շատ դժուարութիւնով անար-  
գանքներէ կ'ցած է ազատիլ:

— Անգլիական նաւատորմի  
պատերազմափորձերը, մինչեւ  
հիմայ եղածներէն ամենէն մեծը  
Յունիս 19 ին պիտի աւարտին:  
Այն նաւաբաժինը որ թշնամին  
կը ներկայացնէ, յարձակեր է  
Չէրնէսի Բիլմուզի և Բորպուզի  
վրայ, սակայն յաղթուելով, փա-  
խուստ տուեր է, իսկ պահեա-  
տի նաւաբաժնի հետապնդումն  
ընէ յաջողած է ճողոպրիլ և Ալ-  
տէրնէյ կղզիին մօտ կը համա-  
խմբուի, ուր պաշտպանողական  
գիծը պիտի յօրինէ:

— Անգլիական նաւատորմի  
«Սդանտարտ» լրագրի համաձայն,  
Եվէտական նաւահանգիստները  
պիտի այցելէ նաև:

Ֆ Ր Ա Ն Ս Ս

Մարտիլիայէն կիմացնեն թէ՛  
տեղւոյն ոստիկանութիւնը Մա-  
րիանի անուն իտալացի անիշխա-  
նակունը ձերբակալել է, կեն-  
թազրուի թէ՛ նա Սպանիոյ թա-  
գաւորի դէմ եղած մահափորձի  
հեղինակին գործակիցն է: Մա-  
րիանին ձերբակալուած ժամա-  
նակամիջոցին ոստիկաններուն  
դէմ կրակ ըրեր է:

Ա Ւ Ս Տ Ֆ Ւ Ա

Հունգարական պատուիրակնե-  
րու հետ միասին, Հունգարիոյ  
նախարարապետ Վէլքերէ և վա-  
ճառականութեան նախարար Գո-  
չուտ Վիէննա գացեր էին ներկայ  
գտնուելու կայսերական անկե-  
դրութեան, առիթն օգտուելով  
Աւստրիոյ նախարարապետ պա-  
րոն Պէզի նոր իրաւաստական  
համաձայնակերպ մը ներկա-  
յացնել:

Աւստրիացիները հակահուն-  
գարական ցոյց մը կընեն հուն-  
գար պատուիրակներու ժողովա-  
տեղիին առջեւ, կը փշրեն ապա-  
կիները, գաւազաններ կը նե-  
տեն, նոյն իսկ գաշոյն մը ճիշտ  
ժողովասրահին մէջ տեղ կրնայ:

Ոստիկանութիւնը կը յաջողի  
ցուցարարները ցրուել: Աւստ-  
րիոյ նախարարապետ Պ. Պէզ իր  
հետ ունենալով նախարարներն  
մին, կէսօրէն վերջ, կերթայ  
Վէզէլէէ ու Կոչուլթէ ներքու-  
թիւն խնդրելու:

Սրբ Հունգարիոյ վաճառակա-  
նութեան նախարար Գոչուլթ Վի-  
էննայէն Պուտաբէշտ կը վերա-  
գառնայ, ամբողջ չը տեսնուած  
ցնծութեամբ զինքը կը դիմաւո-  
րէ կայարանի առջեւ, ու կուզէ  
հակա աւստրիականց ցոյցով մը  
փոխարինել Վիէննայի ցոյցը:

Կորս կոլուրիստի, հունգա-  
րական պատուիրակներու առջեւ,  
արտաքին քաղաքականութեան  
մասին տուած բացատրութիւնը  
Պուտաբէշտի մէջ լաւ ազդեցու-  
թիւն մը չէ ներգործեր:

«Մացիարոցակ» լրագիրը  
կոլուրիստի բացատրութեան  
մէջ նոր երեակ նիղակակցու-  
թեան մը ուրուանկարը կը նըշ-  
մարէ, որուն մասնակցելու է և  
Ռուսիան, որը արտաքին գործոց  
նախարարին Պալքանեան թերա-  
կղզիին մղած քաղաքականու-  
թեան հետեւաքն ըլլալ կը թուի:  
Վերոյիշեալ լրագիրը Հունգա-  
րիան կը զգուշացնէ և կը յոր  
գորէ այսպիսի նիղակակցութե-  
նէ մը հեռու մնալ:

Նա իր խօսքը վերջացնելով  
կըսէ. մենք սերպիական բարե-  
կամութեան կարօս ենք և ոչ թէ  
կոմս կոլուրիստի:

Համախմբակ կուսակցութիւն-  
ներու լրագիրները կոմս կոլու-

խովսգին Հունգարիոյ թշնամին  
կանուանեն և անոր պաշտօնէ հե-  
ռանալը կը պնդեն:

— Կոմս կոլուրիստի հրամա-  
րականի մասին Բարիլեան լրա-  
գիրներու տուած լուրը «Պրէմ-  
աէնպլադ» լրագրի կը հերքէ:

— Ընկերավարականները Վիէն-  
նայի քաղաքապետութեան առ-  
ջեւ միջոցով մը գումարներ են,  
Ետտ մը երեսփոխաններ ներկայ  
էին, ընդ որս Ստլէր, Երմայէր  
Տաշինքը և 50 հազարի չափ  
գործաւորներ: Ետտ խիստ ճա-  
ռեր խօսեր են ընտրողական ի-  
րաւունքի բնաշրջման հակառա-  
կուներու դէմ, փողովը ցրուելէ  
առաջ, որոշում առաւ նրբօքո-  
խանութեան դանդաղութեան  
դէմ բողոքելու: Որոշումը կը  
սպաննայ թէ՛ երեք օր ընդհա-  
նուր և համայնական գործադուլ  
պիտի հրատարակուի: Ինչպէս  
Վիէննայի նոյնպէս նահանգնե-  
րու մէջ կատարեալ կարգապա-  
հութիւն կը տիրէր: Նահանգնե-  
րու մէջ շատ մը տեղեր նմանօ-  
րինակ ցոյցեր եղիւր է:

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Ի Ն Պ Ա Ս Տ Կ Ո Վ Կ Ա Ս Ս Ա Ն Ա Ս  
Ա Ր Կ Ա Ծ Ե Ա Լ Ն Ե Ր Ո Ի

— 3 —

Գեղարարի իր ծանօթ ծրագրով,  
իրեն յատուկ գեղարուեստական և  
գրական մովանդակութեամբ սկսած է  
հրատարակուիլ, և ընդ փոյթ լոյս  
կը տեսնէ Վենետիկի Միլիթարեան  
հարց տպարանէն: Կովկասահայ մեծ  
զանգուածը փութկոտորէն սփոփեց  
արկածեալ իր քահայր. հիմա ինքն է  
լացողը, ինքն է վիճաւորուածը, և  
ինքն է սովի և կրակի մատնուածը:  
այդ մեր հայութեան ամենէն աղնիւ  
զաւակներուն հիմա ձեռք կուտայ  
ԲԱՐՅՈՒՄՈՒԹԻՒԹԻՒԵԼԸ ձեռնպահ չի  
մնար և Գեղունին, որ կովկասահա-  
յուն սրտին մէջ համակրանքի բա-  
ժին մ'ունի Ս. Ղազար որոշած է  
1000 օրինակ Գեղունի (1906) փու-  
թացնել թիֆլիզի ի նպատակով կուսա-  
հայ արկածեալներու յանձնաժողովին:  
Ընդհանուր հայութեան այն ամէն  
անհատ որ տոնապետներու գանձա-  
նակին մէջ համեստ գումար մը—10 ֆր.  
նետելու կարողութիւն ունի, ցան-  
կայի է որ դիմէ այդ յանձնաժողովին  
ուսկից փոխարէն իր բարեգործու-  
թեան, կը ստանայ նոր հրատարակե-  
լի Գեղունին, ոչ ուն կատարելութեան  
համար թերթին միևնոյն վարչու-  
թիւնը ամէն ճիգ ու ջանք կը թափի  
և աւելի՛ եռանդով:

Գեղունին այս անգամ ևս ունի  
յայտարարութեանց բաժին, որուն  
մասնակցելու կը հրաւիրենք մեր  
նշանաւոր ամէն կարգի վաճառա-  
կանները:

Գեղունիի բաժնեկիսն է 10 ֆրանկ,  
Գեղունիի համար լուսանկարներ,  
յայտարարութիւններ և նամակներ  
յղիլ մեր սովորական հասցէին:

Է մ ր Ի մ ր Ի Ա Ր մ է ն ի է ն  
Ս. Ղազար ՎԵՂՆԻՍ  
(Իթալիա)